ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

31 մայիսի 2016 թվականի **թիվ 11** քաղ. Աստանա

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամ նշանակելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 12-րդ հոդվածին, «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 1-ին հավելված) 41-րդ կետի երրորդ պարբերությանն ու Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի 55-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց.**

1. Նշանակել Ժունուսով Ադամկուլ Օրոկեեւիչին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամ Ղրղզստանի Հանրապետությունից՝ Իբրաեւ Դանիլ Տուրսունբեկովիչի նշանակման ժամանակ սահմանված լիազորությունների մնացած ժամանակահատվածի համար:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ «Եվրասիական տնտեսական

հանձնաժողովի կոլեգիայի անհատական կազմի եւ անդամների միջեւ պարտականությունների բաշխման մասին» 2015 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 37 որոշմամբ հաստատված անհատական կազմում ընդգրկել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի էներգետիկայի եւ ենթակառուցվածքի հարցերով կոլեգիայի անդամ (նախարար) Ժունուսով Ադամկուլ Օրոկեեւիչին՝ կոլեգիայի անհատական կազմից հանելով Իբրաեւ Դանիլ Տուրսունբեկովիչին:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**